ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ թիվ 1 03.12.2024թ. ժամը 11[00]

ՕՐԱԿԱՐԳ

1. 1992թ. ՄԱԿ-ը դեկտեմբերի 3-ը հռչակեց Հաշմանդամների միջազգային օր: 2006թ. դեկտեմբերին Հայաստանը միացավ հաշմանդամների իրավունքների կոնվենցիային: 2008թ. փետրվարին Հայաստանում ստեղծվեց հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը, իսկ նույն տարվա մարտին՝ մարզային հանձնաժողովները:

   /Զեկ.՝ ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գոռ Ասրյան/

2. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի կազմում ՀՀ Լոռու մարզը ներկայացնող Հանձնաժողովի անդամ պատվիրակների գործունեության մասին /իրավական գործընթացներ, աշխատանքային հարցեր, ընթացիկ խնդիրներ/

   /Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ Անուշ Ասլանյան/

3. Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ դիմած անձանց հաշմանդամության սահմանման և ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N 72-Ն հրամանով հաստատված անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրումների գործընթացում առկա խնդիրներին լուծում տալու և ընթացիկ աշխատանքների մասին:

   /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան, Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնի տնօրեն, Հանձնաժողովի անդամ Լուսինե Աքմաքչյան/

Այցելություն «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի գրասենյակ

1. Տեղեկատվության հաղորդում «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի 10-ամյա անցած ուղու մասին:

   /Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի նախագահ Անուշ Ասլանյան/

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի հետ աշխատանքային հարաբերությունների տիրույթում իրականացվող «Շարժական սոցիալական կենտրոններ Լոռիում» ծրագրի մասին /«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում կազմակերպված արտադպրոցական խմբակներ/:

   /Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ Ծրագրի ղեկավար Աստղիկ Ասրյան-Ղալայան/

«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ աշխատակազմի կողմից կներկայացվեն Կազմակերպությունում առկա աջակցող միջոցները, դրանք կիրառության ձևերը: